«ՀԱԷԿ» ՓԲԸ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03/07

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20»

ք. Մեծամոր «26» «02» 2020թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մովսես Վարդանյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մի կողմից, և

«ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սասուն Սվազյանի, որը գործում է «ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ՀԱԷԿ» ՓԲԸ տարածքի կանաչապատման և բարեկարգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ ԱԱԾ կողմից ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:**

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծառայության մատուցումը սկսելուց առաջ՝ յուրաքանչյուր ամիս Պատվիրատուի հետ համաձայնեցնել տվյալ ամսվա համար պլանավորված ծառայությունների ցանկը:

2.4.5 **ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008 որոշմամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն համարվում է կարևորագույն օբյեկտ, և ընկերության հարակից տարածք մուտք գործելը իրականացվում է հսկիչ-անցագրային կետով: Ընտրված մասնակիցը պայմանագիրը ստանալուն պես աշխատանքները սկսելուց 40 օր առաջ՝ մուտքի անցագրեր ստանալու նպատակով, Պատվիրատուին պետք է ներկայացնի այն աշխատակիցների տվյալները ովքեր ընդգրկված են այդ աշխատանքներում:**

2.4.6 **Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:**

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **7 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **30500000 (երեսուն միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցում կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցի (Հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին (Հավելված N 3) Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում ծառայությունների վաղաժամկետ մատուցման դեպքում) մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 Հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայության մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նս ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից ա չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 Հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,	ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տարածք,
Հ/Հ 1930000199200100	Շին. Վարչության շենք, 219 սենյակ
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	Հ/Հ 2050322013571001,
ՀՎՀՀ 04401874,	«'Ինեկոբանկ' ՓԲԸ, 'Արմավիր' մ/ճ » ՓԲԸ,
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	ՀՎՀՀ 04414582,
Հեռ.՝ 20-04-91, 33-40	Հեռ.՝ 093-08-61-61,
E-mail: anpp@anpp.am	E-mail: agroatom@mail.ru
..... **Մ. Վարդանյան**	..... **Ա. Սվազյան**

Հավելված N 1
« 26 » « 02 » 2020թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20» ծածկագրով
03/07 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	77311600	***1. Տարածքի մաքրում (ամենօրյա մաքրում աղբից) – 104310 մ²*** *-պայմանագրի կնքման օրից յուրաքանչյուր աշխատանքային օր:* ***2. Սաղարթի ձևավորում մինչև 3մ փրամագծով – 500 ծառ:*** *-պայմանագրի կնքման օրից մինչև ապրիլի 30-ը:* ***3. Ծառերի սպիտակացնող հեղուկի պատրաստում ձեռքով, սպիտակացնելու համար – 1,67 տն:*** *Սպիտակեցնող լուծույթը պետք է ունենա համապատասխան բաղադրություն - պայմանագրի կնքման օրից մինչև ապրիլի 30-ը:* ***4. Հինգ տարեկանից բարձր ծառերի սպիտակեցում ձեռքով - 600 ծառ:*** *(Կիր, փիտան) – 87,5 կգ , ծառի սպիտակեցվող մասի բարձրությունը պետք է լինի 1,0 մ-ից ոչ պակաս, ծառաբունը մինչև սպիտակեցումը պետք է մաքրել չոր ճաքճքած կեղևից և փոշուց-պայմանագրի կնքման օրից մինչև ապրիլի 30-ը:* ***5. Ջրելու համար ծառերի բների պատրաստում – 600 ծառ*** *-պայմանագրի կնքման օրից մինչև ապրիլի 30-ը:* ***6. Ծառերի բների ոռոգում ձեռքով, 1200 մ³/հա ոռոգման նորմայով – 19,5 հա:*** *Ծառերի ոռոգումը իրականացնել ելնելով անհրաժեշտությունից և եղանակային պայմաններից* *-պայմանագրի կնքման օրից մինչև հոկտեմբեր:* ***7. Թունաքիմիկատե հեղուկի պատրաստում ձեռքով– 12,2 տն:*** *Անհրաժեշտ թունաքիմիկատներ՝ Կուպրոկսատ – 27 կգ, Դիմիլին – 15 կգ - ըստ սրսկման անհրաժեշտության:* ***8. Բազմամյա տնկիների (ծառերի) սրսկում տրակտորով 5***	լրակազմ	**30500000**	1	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ	Մուտքի թույլտվություն ստանալու օրվանից մինչև 30.12.2020թ.

		անգամ (4,5x5 հա) – 22,5 հա, - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբերի 30-ը՝ ըստ անհրաժեշտության: ***9. Պարարտացում ձեռքով 0,6x0,6 չափի փոսերում – 600 փոս:*** -կոմպլեքս պարարտանյութ՝ Մաստեր (16% ազոտ, 16% ֆոսֆոր, 16% կալիում) –65,4 կգ 2 անգամ,-պայմանագրի կնքման օրից մինչև մայիսի 31-ը: ***10. Պարտերային և սովորական սիզամարգերի հնձում խոտհունձ մեքենայով – 149 000մ²:*** Սիզամարգերի բարձրությունը պետք է չգերազանցի 5 սմ - պայմանագրի կնքման օրից մինչև դեկտեմբեր՝ ըստ անհրաժեշտության: ***11.- Մեկ շարքանի դալար ցանկապատի խնամք – 1000 մ:*** -կոմպլեքս պարարտանյութ՝ Մաստեր (16% ազոտ, 16% ֆոսֆոր, 16% կալիում) – 90 կգ: Մաքրում չորացած ճյուղերից և տերևներից, ձևավորում, ոռոգում՝ ըստ անհրաժեշտության, սրսկում, արմատների փխրեցում, պարարտացում - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր: ***12. Սպանդարտ նստեցման տեղերի պատրաստում ծառերի-տնկիների համար մեխանիկական մեթոդով 100 % բնահողի ավելացմամբ – 250 փոս:*** Փոսերի դասավորվածությունը համաձայնեցնել պատվիրատուի հետ - պայմանագրի կնքման օրից մինչև ապրիլի 30-ը: ***13. Սպանդարտ նստեցման տեղերի պատրաստում թփերի-տնկիների համար մեխանիկական մեթոդով 100 % բնահողի ավելացմամբ – 200 փոս:*** Փոսերի դասավորվածությունը համաձայնեցնել պատվիրատուի հետ - պայմանագրի կնքման օրից մինչև ապրիլի 30-ը: ***14. Լայնատերև ծառերի տնկում 1,0x0,8 փոսերում – 250 ծառ:*** Ձիաշագանակ – 50 հատ, Ծիրանենի – 50 հատ, Կատալպա – 50 հատ, Հացենի – 100 հատ: Տնկիները լինեն ոչ պակաս 1 տարեկան, հասակը 1,5 մ-ից ոչ պակաս, արմատային բավարար և անվնաս ցանցով, փարթամ տեսքով - պայմանագրի կնքման օրից մինչև ապրիլի 30-ը: ***15. Տնկիների (ծառերի) խնամք – 250 ծառ:*** Նոր տնկված ծառերի ոռոգում, սրսկում, գոմաղբով պարարտացում Գոմաղբ – 1,5 մ³ - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր: ***16. Թփերի-տնկիների տնկում 1,0x0,7 փոսերում (1մ վրա – 12 հատ թուփ)– 2400 թուփ՝*** Կիպրոսենի - 2400 թուփ Թփի բարձրությունը ոչ պակաս 20 սմ, ոչ պակաս 1 տարեկան: - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր ***17. Տնկիների (թփերի) խնամք – 2400 թուփ:***					

		Նոր տնկված թփերի ոռոգում՝ ըստ անհրաժեշտության՝ կախված եղանակային պայմաններից, փխրեցում, գոմաղբով– 7,2մ³ պարարտացում: Թփերի դասավորվածությունը համաձայնեցնել պատվիրատուի հետ - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր: **18. Ծառերի ջրում ցիստեռնով 50լ/ծառ ջրի նորմայով – 500 հատ:** Ըստ անհրաժեշտության՝ կախված եղանակային պայմաններից - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր: **19. Տնկիների (ծառերի) խնամք – 500 ծառ:** Նախկինում տնկված ծառերի պարարտացում գոմաղբով Գոմաղբ – 1,38մ³ -պայմանագրի կնքման օրից մինչև հոկտեմբեր: **20. Թունաքիմիկատե հեղուկի պատրաստում ձեռքով դալար ցանկապատի համար – 1,35 տն:** Կուպրոկսատ – 9 կգ, Դիմիլին – 5 կգ, Գիազինոն հողային – 30 կգ - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր՝ ըստ սրսկման անհրաժեշտության: **21. Բազմամյա տնկիների (դալար ցանկապատ) սրսկում տրակտորով 5 անգամ – 0,22 հա** - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր՝ ըստ սրսկման անհրաժեշտության: **22. Պարտերային սիզամարգերի խնամք – 2516 մ²** Ավելորդ խոտերից մաքրում, ոռոգում, ըստ անհրաժեշտության՝ կախված եղանակային պայմաններից -պայմաններից պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր: **23. Ծաղկանոցի քաղհան դուրի օգնությամբ, փխրեցում ձեռքի գործիքներով և սիզամարգերի ձևավորում ծաղկանոցի շուրջ - 1800 մ²** - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր: **24.Ծաղիկների տնկում 100մ² վրա 1600 հատ (K=0,7) (4700հատ) – 400 մ²** Պիտունյա, Պելագոնիա, Տագեպես, Գացանիա, Կաննա: Ծաղիկների դասավորվածությունը համաձայնեցնել պատվիրատուի հետ - պայմանագրի կնքման օրից մինչև մայիսի 30-ը: **25. Թփերի (վարդերի) սածիլների խնամք տնկված հողում – 150 թուփ՝** նախկինում տնկվածի վարդերի էտում, քաղհանում, չորացած տերևներից, ճյուղերից մաքրում, սրսկում, ոռոգում - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր: **26. Ջրային հեղուկի պատրաստում սրսկման համար – 9,2 տն** Արսենալ – 77 լ - պայմանագրի կնքման օրից մինչև նոյեմբեր՝ ըստ սրսկման անհրաժեշտության:					

		27. Մոլախոտերի սրսկում 2 անգամ սրսկող հարմարանքով – 10,2 հա: *- մայիս-հունիս ամիսներին:* ***28. ՀԱԷԿ-ի տարածքից հրդեհավտանգ, չոր մոլախոտերի հնձում բենզինային խոտհնձիչով (փոցխում, բարձում և տեղափոխում մինչև 5 կմ հեռավորության վրա)– 310000 մ²*** *-պայմանագրի կնքման օրից մինչև օգոստոս:* • *Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տնկիները, թփերը, սածիլները, խնամքի նյութերը, թունաքիմիկատները և աշխատանքային գործիք-սարքավորումները ձեռք է բերելու կատարողը:* *Ատոմակայանի պլանային վերանորոգման աշխատանքների և ջրագծերի վթարների ժամանակ ոռոգումը ապահովել ցիստեռնով՝ կատարողի միջոցներով:* *(Համաձայն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր ճարտարագետի կողմից 22.01.2020թ. հաստատված ծավալաթերթի (Հավելված 1.1)):*					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ

Ս. Սվազյան

Հավելված N 1.1
«26» «02» 2020 թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20» ծածկագրով
03/07 պայմանագրի

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
"ՀԱԷԿ" ՓԲԸ գլխավոր
ճարտարապետ
Ա.Ռ. Գրիգորյան
22 01 2020թ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

"ՀԱԷԿ" ՓԲԸ տարածքի կանաչապատման ծառայություն 2020թ.

Հ/հ	Ծառայության անվանումը	Չափի միավոր	Քանակը
1	Տարածքի մաքրում աղբից	$մ^2$	104 310
2	Մաղարթի ձևավորում մինչև 3մ տրամագծով	ծառ	500
3	Ծառերի սպիտակացնող հեղուկի պատրաստում ձեռքով, սպիտակացնելու համար	տն	1,67
4	5 տարեկանից բարձր ծառերի սպիտակացում ձեռքով	ծառ	600
5	Ջրելու համար ծառերի բների պատրաստում	ծառ	600
6	Ծառերի բների ոռոգում ձեռքով, 1200 $մ^3$/հա ոռոգման նորմայով	հա	19,5
7	Թունաքիմիկատե հեղուկի պատրաստում ձեռքով	տն	12,2
8	Բազմամյա տնկիների (ծառերի) սրսկում տրակտորով 5 անգամ (4,5x5 հա)	հա	22,5
9	Պարարտացում ձեռքով 0,6x0,6 չափի փոսերում	փոս	600
10	Պարտերային և սովորական սիզամարգերի հնձում խոտհունձ մեքենայով	$մ^2$	149 000
11	Մեկ շարքանի դալար ցանկապատի խնամք	մ	1 000
12	Ստանդարտ նստեցման տեղերի պատրաստում ծառերի-տնկիների համար մեխանիկական մեթոդով100 % բնահողի ավելացմամբ	փոս	250
13	Ստանդարտ նստեցման տեղերի պատրաստում թփերի-տնկիների համար մեխանիկական մեթոդով100 % բնահողի ավելացմամբ	փոս	200
14	Լայնատերև ծառերի տնկում 1,0x0,8 մ փոսերում (ձիաշագանակ – 50 հատ, ծիրանենի – 50հատ, կատալպա – 50հատ, հացենի – 100հատ)	ծառ	250
15	Տնկիների (ծառերի) խնամք (նոր տնկած)	ծառ	250
16	Թփերի տնկիների (կիպրոսենի) տնկում 1,0x0,7 մ փոսերում (1մ վրա - 12 հատ թուփ)	թուփ	2 400
17	Տնկիների (թփերի) խնամք	թուփ	2 400
18	Ծառերի ջրում ցիստեռնով 50 լ/ջուր ջրի նորմայով	հատ	500

19	Տնկիների (ծառերի) խնամք	ծառ	500
20	Թունաքիմիկատե հեղուկի պատրաստում ձեռքով դալար ցանկապատի համար	տն	1,35
21	Բազմամյա տնկիների (դալար ցանկապատ) սրսկում տրակտորով 5 անգամ	հա	0.22
22	Պարտերային սիզամարգերի խնամք	մ^2	2 516
23	Ծաղկանոցի քաղհան դուրի օգտագործմամբ	մ^2	1 800
24	Ծաղկանոցի փխրեցում ձեռքի գործիքներով	մ^2	1 800
25	Սիզամարգերի ձևավորում ծաղկանոցի շուրջ	մ^2	1 800
26	Ծաղիկների տնկում 100մ^2 վրա 1,6 հազ.հատ (K=0,7) (4704 հատ)	մ^2	400
27	Թփերի (վարդերի) սածիլների խնամք տնկված հողում	թուփ	150
28	Ջրային հեղուկի պատրաստում սրսկման համար	տն	9.2
29	Մոլախոտերի սրսկում 2 անգամ սրսկող հարմարանքով	հա	10.2
30	ՀԱԷԿ-ի տարածքից հրդեհավտանգ, չոր մոլախոտերի հնձում բենզինային խոտհնձիչով (փոցխում, բարձում և տեղափոխում մինչև 5 կմ հեռավորության վրա)	մ^2	310 000

ՇԲ պետ՝ Վ. Յուզբաշյան

ՇԲ I կ. Ճարտարագետ՝ Տ. Եփրեմյան

ՇԲ I կ. Ճարտարագետ՝ Վ. Գրիգորյան

ՇԲ II կ. Ճարտարագետ՝ Ա. Հարությունյան

Հավելված N 2
«26» «02» 2020 թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20» ծածկագրով
03/07 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	77311600	«ՀԱԷԿ» ՓԲԸ տարածքի կանաչապատման և բարեկարգման ծառայություններ	*Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, Կատարողի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում վաղաժամկետ մատուցված ծառայությունների դեպքում) մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում:*											30500000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

.....Մ. Վարդանյան

ԿԱՏԱՐՈՂ
«ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ

.....Ս. Սվազյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն